ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 հուլիսի 2012թ. թիվ 262

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մայիսի 5-ի թիվ 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման» կարգը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի «ա» ենթակետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզի հանրակրթական դպրոցների 12-րդ դասարանների ավարտական քննություններից անբավարար գնահատականներ ստացած աշակերտների համար «Վանաձորի թիվ 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կազմակերպել և անցկացնել վերաքննություններ:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ Մ.Պողոսյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2012թ. հուլիսի 2
ք.Վանաձոր